
ԽԱՀԱՏՐԱԿԱՆ Լ. Մ., Գրաբարի բացատրական բառարան (ձևաբանորեն տարարժեք բառեր), Ե., 2003, «Ձանգակ» հրատ., 384 էջ:

Հայ բառարանագրության թագն ու պսակը՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (ՆՀԲ) երկհատոր բառարանը (Վենետիկ, 1836-1837), հիմք է հանդիսացել հետագայում կազմելու մասնագիտական, հանրագիտական տարբեր տիպի բառարաններ: Եվ շատ ուրախալի է, որ գրաբարի բառարաններ են կազմվում նաև մեր օրերում: Այդպիսի բառարաններից մեկն էլ Լալիկ Խաչատրյանի կազմածն է, որը վերաբերում է բառագիտության մի ճյուղին՝ գրաբարի ձևաբանորեն տարարժեք բառերին:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ. Խաչատրյանը շուրջ քսան տարի է, ինչ զբաղվում է հայերենի բառագիտության զանազան հարցերով: Այդ թեմայով նա արդեն հրատարակել է երկու մենագրություն (Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Ե., 1985, Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Ե., 1996) և երկու բառարան (Գրաբարի տարարժեք բառերի բացատրական բառարան, Ե., 1998, Գրաբարի բացատրական բառարան, Ե., 2003): Վերջին բառարանը առաջինից տարբերվում է նրանով, որ սրանում ընդգրկված ավելի քան չորս հազար բառերի համար բերված են նաև բնագրային վկայություններ, որոնք հիմնականում քաղված են V-XI-դդ. գրաբարի մատենագրությունից:

Հեղինակը բառարանին կցել է ընդարձակ առաջաբան, որտեղ քննում է գրաբարի ձևաբանորեն տարարժեք բառերի առաջացման ուղիները, իմաստաարժեքային փոփոխությունների կադապարները, ձևաբանական արժեքների հնարավոր համատեղումները և, որ ամենակարևորն է, դասդասում է այդ բառերը ըստ ձևավորման ժամանակային գործոնի՝ առանձնացնելով համաժամանակյա և տարժամանակյա շերտերը: Ըստ այդմ, հեղինակն օգտվել է հետազոտության համաժամանակյա և տարժամանակյա մեթոդներից: Հայտնի է, որ լեզվի զարգացման ընթացքում տեղի են ունենում բառիմաստի զանազան փոփոխություններ՝ բառիմաստի ընդլայնում, նեղացում, շրջում, վերաիմաստավորում և այլն: Բառիմաստի նման փոփոխությունները հիմք են դառնում բառերի ձևաբանական արժեքի երկփեղկման. ժամանակի ընթացքում այս կամ այն բառը հանդես է գալիս երկու և ավելի խոսքի մասերի արժեքով: Բառերի իմաստաարժեքային դաշտում կատարվող տեղաշարժերը ըստ անցման բնույթի լինում են երկու տեսակ՝ ա) մասնակի կամ շարահյուսական, որի դեպքում բառը ձեռք է բերում բազմիմաստություն, բ) լիակատար կամ ձևաբանական, երբ բառը զրկվում է նախկին իմաստից ու արժեքից և ձեռք է բերում նոր խոսքիմասային արժեք:

Ձևաբանորեն տարարժեք բառերը հավասարապես կարող են հանդես գալ մեկից ավելի խոսքիմասային արժեքներով՝ հիմնականում երկու և երեք, շատ հազվադեպ՝ նաև չորս: Օրինակ՝ «ԱՅԼԱԼԵԶՈՒ, ա. Ուրիշ լեզվով խոսող, այլաբարբառ. Ած ի վերայ նոցա ազգ լիրբ եւ **այլալեզու** (Բարուք, Դ. 15): գ. Օտար

լեզու՝ խոսվածք՝ բարբառ. Եւ եթէ իցեն ինչ բանք ուրուք ի նոցանէն վասն փոքու իրիք՝ եւ այն ի հեռաւորսն եւ *յայլալեզուսն* (Ղեւոնդ, 62) »:

Համաժամանակյա կտրվածքով V դարում ավելի շատ են հանդիպում մենիմաստ բառերից առաջացած երկարժեք և եռարժեք բառերը, իսկ առհասարակ գրաբարում ավելի հաճախակի են երկարժեք>եռարժեք կադապարով առաջացածները: Օրինակ՝ *գաղտ* բառը հենց V դարում համատեղում է մակբայի, ածականի և նախադրության խոսքիմասային արժեքներ: Այսպես՝ «*Գաղտ*, մ. Աննկատ, ծածուկ, լռելյայն. Որ խօսէր *գաղտ* զընկերէ (Սաղմ., ճ. 5): ա. Անհայտ, *գաղտնի*. Վասն զի *գաղտ* ուխտ իւր եւ խորհուրդ ընդ թագաւորին Յունաց է (Փարպ., 12). նիւ. Թաքուն, մեկուսի. Յորոց ձեռս տալլ *գաղտ* յերանելի սպարապետէն Վարդանայ զգրեալսն (Փարպ., 68) »:

Հին հայերենի բառային կազմում ձևաբանորեն տարարժեք բառերը բառարանագրի կողմից իրավացիորեն բաժանել են երկու շերտի՝

ա) Համաժամանակյա տարարժեք բառեր, որոնք երկատված արժեքով առկա են դասական գրաբարում: Օրինակ՝ «ԱՌԸՆԹԵԸ, մ. Միասին, նույն տեղում. *Առընթեր* եւս ունիցիմք զդիրահասոյց քաջալերիչն (Ա-գաթ., 247): նիւ. Մերձ, մոտ. Երկու առիծունք կային *առընթեր* ձեռացն (Գ. Թագ. Ժ 19):

Ավելի ուշ՝ VIII դարում, այդ բառը ձեռք է բերում նաև ածականի խոսքիմասային արժեք՝ «առաջիկա, մերձակա» իմաստներով, այսպես՝ *Յառընթեր* դաւաճանութեանց խոյս տալ, եւ յապառնեաց պահել զինքեանս (Նիւսացի, Գիրք բնութեան) »:

բ) Տարժամանակյա տարարժեք բառեր, որոնք երկատվել են գրաբարի դասական և հետդասական փուլերում: Տե՛ս, օրինակ, *անագան, զուգամասն, ընդհատ, կէս, կից, հանգոյն, հաստատ, հաւասար, հեռագոյն, ձիգ, ձրի, մերկ, նախաշաւիդ, նախապատիւ, նախատիպ, նախընծայ, նախնի, նմանագոյն, նմանապէս, քաղցր, օրինակ* բառերը: Բերենք միայն մեկ բառահոդվածի օրինակ: «ԱՆԱԳԱՆ, ա. Ուշ, ոչ կանուխ. Որոց գիտացեալ զվաղ եւ *զանագան* կենցաղոյս զվախճան՝ ընտրեցին ըմբռնել զյաւիտենից կեանսն (Փարպ., 70): գ. ՈԻ՛շ՝ հետո լինելիք բան. Լո՛ւր ինձ կանխաւ, զի *զանագանն* մի՛ մոռացցիս (Նար ., 219): մ. Հետո, շատ ուշ. Գամ մի չկարացեալք վաղ եւ կամ *անագան* զերծանել ի մահուանէ (Փարպ., 57) »:

Շատ ավելի քիչ են քառարժեք բառերը, որոնք ևս առաջացել են գրաբարի տարբեր փուլերում. տե՛ս, օրինակ, *զունակ, ներքոյ, նման, շուրջ, փոխանակ, փոխարէն* բառահոդվածները: Դրանք հիմնականում համատեղում են գոյական //ածական//մակբայ//նախադրություն խոսքիմասային արժեքներ: Գոյական//ածական//մակբայ//շաղկապ արժեքներ է համատեղում *համայն* բառը, իսկ ածական//մակբայ//եղանակավորող բառ//շաղկապ արժեքներ՝ *միայն* բառը: Հայերենում պատմական բառարան չլինելու պատճառով առանձին դեպքերում հնարավոր չէ ամենայն ճշգրտությամբ որոշել խոսքիմասային փոխանցումների հաջորդականությունը:

Բառարանում մեծ տոկոս են կազմում այն բառերը, որոնք միաժամանակ համատեղում են երկու խոսքի մասի արժեք, որոնց իմաստները ՆՀԲ-ն և «Առձեռն

բառարանը» (ԱԲ) հիմնականում մակաբերում են դրանց շարահյուսական կիրառությունից: Հարկ է նշել, որ դրանց վերաբերյալ բերված են համապատասխան օրինակներ, այսպես՝ «ԱՌԱՔԵԱԼ, ա./ գ. Ուղարկված /մեկի կողմից/. ճանապարհ ընկած. լուր տանող. սուրհանդակ. ա. Ես եմ **առաքել** առ քեզ խստությամբ (Գ. Թագ., ԺԴ 6): գ. Դառնայ **առաքել** անդրեն ի Բաբելոն (Խոր., 34): գ. Քրիստոսի տասներկու աշակերտներից յուրաքանչյուրը. Որպես ասաց մեծ **առաքել** Պողոս (Ագաթ., 13) »:

Բառարանում տեղ են գտել նաև այնպիսի բառեր, որոնց երկատված արժեքների համար հանդիպում է բնագրային մեկ օրինակ (նման բառերը առանձնացվել են աստղանիշով), տե՛ս **ազատագոյն, ահագնասաստօրէն, աղօտամատոյց, այրէնածին, այրանման, անյուսալից, բոլորակամ, գլխագիր, խորամթին, մատենապատում, յոլովագուրթ, ոտնափշուր, որմաշէն, ռամկավար, վեցաչափք, քաջաշնորհ** և այլն: Որպես նմուշ բերենք միայն մեկ բառահոդվածի օրինակ: «ԱԶԱՏԱԳՈՅՆ*, ա./մ. Ավելի ազատ, ազատորեն. Զգործոյն **ազատագոյն** առնեն զընտրութիւն (ՆՀԲ) »:

Սույն բառարանի համար որպես սկզբնաղբյուր ծառայած ՆՀԲ-ում և ԱԲ-ում տարարժեք բառերի իմաստները մակաբերված են այդ բառերի շարահյուսական գործառնությունից, որի պատճառով էլ այդ բառարաններում բազմաթիվ բառերի տարարժեքության նշումը ճիշտ չէ: Ի դեպ, բառարանի այդ թերությունը ժամանակին նկատել է Ն. Բյուզանդացին և արել համապատասխան լրացումներ ու ուղղումներ¹: Լ.Խաչատրյանը բառի իմաստաարժեքային երկատվածության սահմանները ճշգրտելիս հաշվի է առել նաև Ն. Բյուզանդացու ուղղումները: Բառարանին ի մոտո ծանոթանալով՝ կարող ենք ասել, որ բառարանագրին հաջողվել է լուծել այդ տիպի բառարանին ներկայացվող հիմնական պահանջները, այն է՝ գրաբարի տարարժեք բառերի առանձնացումը, դրանց խոսքիմասային պատկանելության և իմաստների նշումը, բնագրային համապատասխան վկայությունների ընտրությունը և այլն:

Բառարանում իրավացիորեն տեղ չեն գտել թվականները, դերանունները, բարբառային բառերը, ինչպես նաև համանուն այն բառերը, որոնք բուսանունների և կենդանակերպների անվանումներ են: Բառերի բառակազմական (ծփալի-ծփալիք), հնչյունական (լրջամիտ-լրջմիտ) տարբերակները տրվել են առանձին գլխաբառերով, առանձնացվել են համանուն բառերը և ներկայացվել ցուցիչով (կոյս. 1-կոյս. 2), բացատրվել են բոլոր իմաստները և բերվել են բնագրային համապատասխան օրինակներ, որոնք հիմնականում քաղված են Աստվածաշնչից և հինգերորդ դարի մեր մատենագիրների երկերից: Հետագայում առաջացած նոր բառիմաստները հաստատվել են V-XI դդ. մատենագրությունից ընտրված վկայություններով:

Բառարանում երբեմն հանդիպում ենք վիճահարույց բացատրությունների: Դրանց մի մասը վերաբերում է մեկական վկայություն ունեցող երկատված

¹ Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի. Սրբագրուած ու ճոխացուցած **Նորայր Բիւզանդացու** ձեռքով: Հրատարակութեան պատրաստեց Մարտիրոս Մինասեանը, Ժնև, 1990:

բառերին: Այսպես՝ «Գունդն բիրեղ ոչ կարէ հեղուլ **բորբ** շող լուսոյ (Շիր.)».
ընդգծված ածականը համարված է նաև գոյական: «Ուժով ոչ գոք ունելով իւր **գոյգ**
(Խոր., 32) ».
այստեղ **գոյգ**-ը նախադրություն է, ոչ թե ածական:

Մի քանի միարժեք բառեր դիտված են երկարժեք, որը համոզիչ չէ:
Հացկերույթ, պատմաբան, վիճաբան, փողապատ բառերն ունեն ա./գ. նշումը, բայց
բերված օրինակներում բոլորն էլ գոյական են: Բերենք մեկի օրինակը.
«Զհողաթափս Հոփսիմեայ, եւ **գփողապատն** ներկեալ սուրբ արեամբ (Արծր., Ե.
12) »:

Սույն բառարանն ունի տեսական և գործնական նշանակություն: Հարուստ
ավանդույթներով հայ բառարանագրության մեջ առաջին անգամ ի մի են բերվում
գրաբարի հայտնի բառարաններում, գրաբարալեզու մատյաններում (և դրանց
համաբարբառներում) ու այլ բնույթի երկերում սփռված տարարժեք բառերը:
Բառարանը կարող է օգտակար լինել բանասերներին և առհասարակ հայոց լեզվի
հարցերով, մասնավորապես բառագիտությամբ ու պատմական
իմաստաբանությամբ հետաքրքրվողներին:

ԹՈՍՈՒՆՅԱՆ Գ. Բ.

Բանասիրական գիտությունների թեկնածու